

«ԱՄՊԵՐ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

*2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության նկարագրություն	5
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները	5
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը	5
4. Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ	14
5. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ	15
6. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ	16
7. Հիմնական միջոցներ	18
8. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ	19
9. Տրամադրված փոխառություններ	19
10. Պաշարներ	19
11. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	20
12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21
13. Վարկեր և փոխառություններ	21
14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21
15. Ընթացիկ հարկային պարտավորություններ	21
16. Հատույթ	22
17. Վաճառքի ինքնարժեք	22
18. Վարչական ծախսեր	22
19. Ֆինանսական ծախսեր	23
20. Շահութահարկ	23
21. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ	24
22. Գործարքներ կապակցված կողմերի հետ	24
23. Իրական արժեք և Ռիսկերի կառավարում	25
24. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր	30



Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱՄՊԵՐ» Փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՄՊԵՐ» Փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի միջազգային կանոնագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԵՄՍ կանոնագիրը), և պահպանել ենք Էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԵՄՍ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

«ԱՄՊԵՐ» Փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական հաշվետվությունները 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար աուդիտի չեն ենթարկվել, և մենք կարծիք չենք արտահայտում այդ ֆինանսական հաշվետվություններից քաղված համեմատական տեղեկատվության վերաբերյալ:

Ղեկավարության և Բաժնետերերի ընդհանուր ժողովի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված խոչընդոտ բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Բաժնետերերի ընդհանուր ժողովը պատասխանատու է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

ՖԻՆԱ ԱՌԻԴԻՏ ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Պարոնյան 9 բն. 12

Էլ հասցե՝ info@fins.am

Հեռ.՝ +374 60 525 025



FINNS AUDIT CJSC

Address: Yerevan, Paronyan str. 9 h. 12

Email: info@fins.am

Phone: +374 60 525 025

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամուտք են կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լուրմս՝

- ▶ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ▶ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքների համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե ԸՆկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- ▶ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- ▶ եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է ղեռքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել ԸՆկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել ԸՆկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:
- ▶ գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Բաժնետերերի ընդհանուր ժողովին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ՖԻՆԱ ԱՌԻԴԻՏ» ՓԲԸ

30 հունիս, 2023թ.

ՀՀ, ք. Երևան

Տևորեն

Աուդիտի ղեկավար

Արմինե Ավագյան

Յուլյա Մակարյան



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2022թ.	2021թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	892,806	1,062,987
Օգտագործման իրավունքով ակտիվներ	8	71,647	81,996
Տրամադրված վարկեր և փոխառություններ	9	866,213	95,613
Հետաձգված հարկային ակտիվներ	20	21,681	-
		1,852,347	1,240,596
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	10	770,217	413,735
Տրամադրված փոխառություններ	9	447,120	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	772,284	295,813
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	1,114	241,312
		1,990,735	950,860
Ընդամենը ակտիվներ		3,843,082	2,191,456
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ		1	1
Կուտակված շահույթ/(վնաս)		858,703	(294,206)
		858,704	(294,205)
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	13	1,496,718	1,375,857
Վարձակալության գծով պարտավորություններ	8	70,410	81,335
		1,567,128	1,457,192
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	13	639,168	867,139
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	559,871	128,962
Վարձակալության գծով պարտավորություններ	8	18,063	15,668
Շահութահարկի գծով պարտավորություն	15	109,728	670
Ընթացիկ հարկային պարտավորություններ	15	90,420	16,030
		1,417,250	1,028,469
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		3,843,082	2,191,456

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են ընկերության ղեկավարության կողմից՝

Գլխավոր տնօրեն՝
Գլխավոր հաշվապահ՝

30 հունիսի, 2023թ.



Գարիկ Կարսյան
Ամայա Մարտիրոսյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***(հազար ՀՀ դրամ)*

	Ծան.	2022թ.	2021թ.
Հասույթ	16	4,504,217	1,065,175
Վաճառքի ինքնարժեք	17	(3,246,856)	(1,133,966)
Համախառն շահույթ/(վնաս)		1,257,361	(68,791)
Վարչական ծախսեր	18	(186,879)	(88,374)
Այլ գործառնական եկամուտներ		42,294	905
Այլ գործառնական ծախսեր		(42,100)	(9,074)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		1,070,676	(165,334)
Ֆինանսական եկամուտ		39,494	91
Ֆինանսական ծախսեր	19	(296,217)	(126,253)
Չուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից		426,924	130,247
Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը		1,240,877	(161,249)
Շահութահարկի գծով ծախս	20	(87,968)	-
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)		1,152,909	(161,249)
Հաշվետու ժամանակաշրջանի ընդամենը համապարփակ եկամուտ/(վնաս)		1,152,909	(161,249)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***(հազար ՀՀ դրամ)*

	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	1	(132,957)	(132,956)
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ/(վնաս)	-	(161,249)	(161,249)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	(294,206)	(294,205)
Տարվա շահույթ	-	1,152,909	1,152,909
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	858,703	858,704

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2022թ.	2021թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Իրացումից մուտքեր		4,565,735	851,548
Մատակարարների վճարումներ		(3,293,464)	(987,594)
Վշխատակիցներին վճարումներ		(65,182)	(29,492)
Հարկերի վճարում բացի շահութահարկից		(13,762)	(17,650)
Այլ մուտքեր/(վճարումներ)		57,648	(9,915)
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ գործառնական գործունեությունից		1,250,975	(193,103)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերումներ		(237,058)	(53,559)
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ ներդրումային գործունեությունից		(237,058)	(53,559)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Վարկերից և փոխառություններից մուտքեր		709,500	2,685,540
Վարկերի և փոխառությունների մարում		(755,234)	(2,063,115)
Տրված փոխառություններ		(1,327,872)	(95,613)
Տրված փոխառությունների մարում		132,416	-
Վարձակալության գծով վճարումներ	8	(18,987)	(17,887)
Վճարված տոկոսներ		(5,845)	(23,248)
Ստացված տոկոսներ		82	92
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ ֆինանսավորման գործունեությունից		(1,265,940)	485,769
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (սվազում)/աճ		(252,023)	239,107
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ		11,825	884
Դրամական միջոցներ և դրանց համարժեքները հաշվետու տարվա սկզբում	12	241,312	1,321
Դրամական միջոցներ և դրանց համարժեքները հաշվետու տարվա վերջում	12	1,114	241,312

(հազար ՀՀ դրամ)

1. Գործունեության նկարագրություն

«ԱՄՊԵՐ» (նախկին անվանումը՝ «Լիեն Զոմփանի») Փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2019թ. փետրվարի 18-ին՝ որպես շահույթ ստանալու նպատակով առևտրային կազմակերպություն և գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Ընկերության 100% սեփականատերը առ 31 դեկտեմբերի 2021թ. և 2022թ. հաղիսանում է «ԼՌՏ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ «Ի ԷՄ ԿԱՊԻՏԱԼ ՖՈՆԴ» պայմանագրային ոչ հրապարակային միջակայքային ներդրումային ֆոնդը:

Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Տաշիր, Ջահուկյան փողոց, 5-րդ թաղամաս, 3-րդ գործարան:

Ընկերության հիմնական գործունեությունն է բարձրավույտ մալուխների արտադրությունը և վաճառքը տեղական շուկաների սպառողներին:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ունեցել է 47 աշխատող (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 47 աշխատող):

1.2 Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1 հազար ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1 հազար ՀՀ դրամ): Այն բաղկացած է 1,000 բաժնեմասերից, որոնց անվանական արժեքը՝ 1 ՀՀ դրամ է (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,000 բաժնեմասերից, որոնց անվանական արժեքը 1 ՀՀ դրամ):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լիովին վճարված (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված և լիովին վճարված):

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Ընդհանուր

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ):

Ընկերությունը պարտավորված է իրականացնել հաշվապահական հաշվառումը և պատրաստել ֆինանսական հաշվետվությունները ՀՀ դրամով՝ հաշվապահական հաշվառման ՀՀ օրենսդրությանը և դրանից բխող ցուցումներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, ինչպես բացահայտված է ստորև բերված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (ՀՀ դրամ), և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար ՀՀ դրամ, եթե այլ բան նշված չէ:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ավանդադրված միջոցները դասակարգվում են որպես կարճաժամկետ, եթե նրանց մարման ժամկետը հաշվետու ժամանակաշրջանից հետո մինչև 90 օր է:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Կանխավճարներ

Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեքկման կորստի գծով պահուստը:

Կանխավճարը դասակարգվում է որպես ոչ ընթացիկ, երբ դրա հետ կապված ապրանքներն ու ծառայությունները ակնկալվում են ձեռք բերվել մեկ տարուց հետո, կամ երբ այն վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման պահին կդասակարգվեր որպես ոչ ընթացիկ: Ակտիվների ձեռքբերման համար տրված կանխավճարները տեղափոխվում են ակտիվի հաշվեկշռային արժեք, երբ ընկերությունը ակտիվի նկատմամբ ձեռք է բերում վերահսկողություն, և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի ընկերություն: Այլ կանխավճարները ծախսագրվում են ֆինանսական արդյունքներում, երբ ստացվում են դրանց հետ կապված ապրանքներն ու ծառայությունները: Եթե առկա է որևէ հայտանիշ, որ կանխավճարի հետ կապված ակտիվները, ապրանքներն ու ծառայությունները չեն ստացվելու, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համարժեք կերպով նվազեցվում է, և համապատասխան արժեքկումից կորուստը ճանաչվում է տվյալ տարվա ֆինանսական արդյունքներում:

Հիմնական միջոցներ

(i) Ծանաչում և չափում

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեքկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը և ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսերը, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, գտնվելու տեղանքի վերականգնման ծախսերը և կապիտալացված փոխառության ծախսերը: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, ապա այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ, և ճանաչվում է զուտ հիմունքով այլ եկամուտ/այլ ծախս հոդվածում շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցիչ փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ ընկերությունը կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և դրա արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործմանը պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործմանը պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Հիմնական միջոցներ (շարունակություն)

Ստորև ներկայացված են նշանակալի հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար.

Շենքեր – 10-ից 100 տարի

Մեքենաներ և սարքավորումներ – 1-ից 5 տարի

Արտադրական գույք – 1-ից 8 տարի

Այլ հիմնական միջոցներ – 1-ից 8 տարի

Վարձակալվող գույքի բարելավումներ – Վարձակալության ժամկետի և ակտիվի օգտակար ծառայության ժամկետի նվազագույնը

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով գնահատված օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության ժամկետից նվազագույնով:

Եթե վարձակալական ժամկետի վերջում վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է Ընկերությանը կամ դրա արժեքն արտացոլում է գնման օպցիոնի իրագործումը, մաշվածությունը հաշվարկվում է օգտագործելով ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները նույնպես ենթակա են արժեզրկման գնահատման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Ընկերությունը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները ներառում են հաստատուն վճարումները (ներառյալ ըստ Էուրյան հաստատուն վճարումները)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումները, վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից և գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, երբ Ընկերությունը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Ընկերության՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը:

Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը (բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք կատարվել են պաշարների ստացման նպատակով):

Վարձավճարների ներկա արժեքը հաշվարկելիս Ընկերությունը օգտագործում է վարձակալության մեկնարկի ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, քանի որ վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Վարձակալության գծով պարտավորություններ (շարունակություն)

արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, վարձավճարների փոփոխություն (օր.՝ ապագա վճարումների փոփոխություն պայմանավորված այդ վարձավճարները որոշելու համար օգտագործված ինդեքսի կամ դրույքի փոփոխությամբ) կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Կարճաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ

Ընկերությունը իր կարճաժամկետ վարձակալությունների նկատմամբ (այսինքն՝ այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվից 12 ամիս և պակաս է, և որոնք չեն պարունակում գնման օպցիոն) կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը: Ընկերությունը նաև կիրառում է փոքրարժեք ակտիվների վարձակալությունների ճանաչման բացառությունը այն գրասենյակային գույքի վարձակալությունների նկատմամբ, որոնց արժեքը, ենթադրվում է, որ փոքր է: Կարճաժամկետ վարձակալություններին և փոքրարժեք ակտիվների վարձակալություններին վերաբերող վարձավճարները գծային հիմունքով ծախս են ճանաչվում վարձակալության ժամկետի ընթացքում:

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչում և չափում

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվները դասակարգվում և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման ժամանակ պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվների դասակարգումը կախված է վերջիններիս պայմանագրային դրամական հոսքերի բնույթից և դրանք կառավարելու Ընկերության բիզնես մոդելից: Բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսավորման բաղադրիչ, կամ որոնց համար Ընկերությունն օգտագործել է կիրառելի նպատակահարմար մոտեցում, Ընկերությունը սկզբնապես ֆինանսական ակտիվը չափում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը չի չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք չեն պարունակում էական ֆինանսավորման բաղադրիչ, կամ որոնց համար Ընկերությունը օգտագործել է կիրառելի նպատակահարմար մոտեցում և որոնք ունեն 1 տարի և պակաս ժամկետայնություն, չափվում են ՖՀՄՍ 15-ով սահմանված գործարքի գնով:

Որպեսզի ֆինանսական ակտիվը դասակարգվի և չափվի ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, անհրաժեշտ է, որ վերջինս առաջացնի դրամական հոսքեր, որոնք «բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն» են (SPPI): Այս գնահատումը կոչվում է SPPI թեստ և կատարվում է գործիքի մակարդակով: Ֆինանսական ակտիվները, որոնց դրամական հոսքերը «բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն» չեն, դասակարգվում և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով անկախ Ընկերության բիզնես մոդելից:

Ֆինանսական ակտիվների կառավարման Ընկերության բիզնես մոդելը ներկայացնում է, թե ինչպես է դրամական հոսքեր ձևավորելու նպատակով վերջինս կառավարում իր ֆինանսական ակտիվները: Բիզնես մոդելը սահմանում է, թե արդյոք դրամական հոսքերը ձևավորվում են պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ երկուսից միաժամանակ:

Ֆինանսական ակտիվների ձեռքբերումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարար սովորույթով (սովորական գործարքներում) սահմանված ժամկետի ընթացքում, ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Ընկերությունը ձեռք է բերել կամ վաճառել ակտիվը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Հետագա չափում

Հետագա չափման նպատակներով ֆինանսական ակտիվները դասակարգվում են չորս դասերից մեկում.

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ),
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները և կորուստները ապաճանաչման ժամանակ վերադասակարգվում են (պարտքային գործիքներ),
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները կամ կորուստները ապաճանաչման ժամանակ չեն վերադասակարգվում (կապիտալի գործիքներ),
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ընկերությանն առավել բնորոշ է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների դասը: Ընկերությունը ֆինանսական ակտիվները չափում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում են ստորև թվարկված երկու պայմանները.

- ▶ Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահելը՝ պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու նպատակով, և
- ▶ Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հետագա չափումներն իրականացվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և ենթակա են արժեզրկման գնահատման: Ստացված տոկոսները ճանաչվում են ֆինանսական եկամտի կազմում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Օգուտներն ու կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե ակտիվը ապաճանաչվում է, ենթարկվում է փոփոխությունների կամ արժեզրկվում է:

Ընկերության ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներում ներառվում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները և տրամադրված փոխառությունները:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ, որտեղ կիրառելի է, ֆինանսական ակտիվի մի մասը, կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- ▶ ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը, կամ
- ▶ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ, փոխանցման համաձայնագրի համաձայն, ստանձնել է ստացված դրամական միջոցների հոսքերը ամբողջությամբ երրորդ կողմին վճարելու պարտականություն առանց էական ուշացման, և ա) Ընկերությունը փոխանցել է, ըստ էության, ակտիվի բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ բ) Ընկերությունը չի փոխանցել կամ պահպանել, ըստ էության, ակտիվի բոլոր ռիսկերն ու հատույցները, բայց փոխանցել է ակտիվի հսկողությունը:

Երբ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ ձեռք է բերել փոխանցման համաձայնագիր, վերջինս պետք է գնահատի, թե ինչ չափով է պահպանել ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները: Երբ Ընկերությունը ո՛չ փոխանցել է, ո՛չ պահպանել է ակտիվի, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ոչ էլ փոխանցել է ակտիվի հսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել փոխանցված ակտիվը իր շարունակվող ներգրավվածության չափով: Այս դեպքում, Ընկերությունը նաև ճանաչում է դրա հետ կապված պարտավորությունը: Փոխանցված ակտիվը և դրա հետ կապված պարտավորությունը չափվում են այն հիմքով, որը արտացոլում է Ընկերության պահպանած իրավունքներն ու պարտականությունները:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Շարունակվող ներգրավվածությունը, որը ձեռք է բերում փոխանցված ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, չափվում է ակտիվի սկզբնական հաշվեկշռայի արժեքի և այն առավելագույն արժեքից նվազագույնով, որը Ընկերությունից կարող է պահանջվել մարել:

Արժեզրկում

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող վարկային կորուստների պահուստ բոլոր այն պարտքային գործիքների համար, որոնք չեն հաշվառվում և չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Ակնկալվող վարկային կորուստների պահուստը հիմնված է պայմանագրի համաձայն պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և Ընկերության կողմից ստացվելիք ակնկալվող դրամական հոսքերի տարբերության վրա՝ գեղջված մոտարկված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Ակնկալվող դրամական միջոցների հոսքերը ներառում են գրավադրված միջոցների վաճառքից ստացվող դրամական միջոցների հոսքերը կամ պայմանագրային պայմանների մաս կազմող պարտքային դիրքի այլ ամրացումները:

Ակնկալվող վարկային կորուստների պահուստները ճանաչվում են երկու փուլով: Պարտքային ռիսկերի ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնք պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր Էականորեն չի ավելացել, ակնկալվող վարկային կորուստների պահուստները ձևավորվում են այն պարտքային կորուստների համար, որոնք առաջանում են հաջորդող 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանական դեպքերի արդյունքում (12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստներ): Պարտքային ռիսկերի ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնք պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր Էականորեն ավելացել է, ակնկալվող վարկային կորուստների պահուստը պետք է ձևավորել ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների համար՝ անկախ դեֆոլտի տեղի ունենալու ժամկետից (ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստներ):

Առևտրային դեբիտորական պարտքերի (պայմանական գնանշմանը ոչ ենթակա) և այլ դեբիտորական պարտքերի համար, որոնք ժամկետանց են 12 ամսից ավելի քիչ, Ընկերությունը կիրառում է ակնկալվող վարկային կորուստների հաշվարկման պարզեցված մոտեցումը, ինչպես թույլատրվում է ՖՀՄՍ 9-ով: Հետևաբար, Ընկերությունը հետևում է պարտքային ռիսկի փոփոխություններին և ակնկալվող վարկային կորուստները հաշվարկում է Մուղիզի կողմից հրապարակված սեկտորների դեֆոլտի հավանականության հիման վրա:

Ամորտիզացված արժեքով պահվող այլ ֆինանսական ակտիվների համար (որոնք ժամկետանց են 12 ամսից ավելի), ակնկալվող վարկային կորուստները հիմնված են 12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստների վրա: 12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստները ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստների մի մասն են կազմում, որը առաջանում է ֆինանսական գործիքի դեֆոլտի դեպքում, որը հավանական է, որ տեղի կունենա հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա ընթացքում: Սակայն, այն դեպքում, երբ ակտիվի սկզբնական ճանաչումից ի վեր առկա է պարտքային ռիսկի Էական ավելացում, պահուստը պետք է հիմնված լինի ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստների վրա:

Սահմանելու համար, թե արդյոք ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր Էական ավելացել է, թե՛ ոչ, և ակնկալվող վարկային կորուստները գնահատելու համար Ընկերությունը հաշվի է առնում ողջամիտ և հուսալի տեղեկատվությունը, որը համապատասխանում է և հասանելի է առանց ավելորդ ծախսի և ջանքերի: Սա ներառում է ինչպես քանակական, այնպես էլ որակական տեղեկատվություն և վերլուծություն՝ հիմնված Ընկերության պատմական փորձի և պարտքերի գնահատման, ներառյալ՝ ապագային միտված տեղեկատվության վրա:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Ընկերությունը ֆինանսական ակտիվը համարում է դեֆոլտ եղած, եթե դրա գծով պայմանագրային վճարումները 90 օրից ավել ժամկետանց են: Այնուամենայնիվ, որոշակի դեպքերում, Ընկերությունը կարող է ֆինանսական ակտիվը համարել դեֆոլտ եղած, եթե ներքին կամ արտաքին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ հավանական չէ, որ Ընկերությունը մինչև Ընկերության կողմից պահվող որևէ պարտքային դիրքի ամրապնդումը հաշվի առնելը ամբողջությամբ կստանա պայմանագրային գումարը: Ֆինանսական ակտիվը դուրս է գրվում, եթե առկա չէ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի վերականգնման ողջամիտ ակնկալիք, և սովորաբար տեղի է ունենում այն դեպքում, եթե 1 տարուց ավել ժամկետանց է և ենթակա չէ հարկադրված գործողության:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական ակտիվները արժեզրկված են, թե՛ ոչ: Ֆինանսական ակտիվը արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք ունեցել են բացասական ազդեցություն ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական պարտավորություններ

Սկզբնական ճանաչում և չափում

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ, վարկեր և փոխառություններ, կրեդիտորական պարտքեր, կամ անհրաժեշտության դեպքում ածանցյալ գործիքներ՝ նախատեսված որպես արդյունավետ հեջավորման գործիքներ: Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների և կրեդիտորական պարտքերի դեպքում՝ գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրելի ծախսումները գուտապես:

Հետագա չափումը

Ֆինանսական պարտավորությունների չափումը կախված է դրանց դասակարգումից, ինչպես նկարագրված է ստորև.

Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ

Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունները ներառում են վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորությունները և սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող նախատեսված ֆինանսական պարտավորությունները:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանք ձևավորվել են առաջիկայում հետգնման նպատակով: Այս դասը ներառում է նաև Ընկերության ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք հեջավորման գործարքներում նախատեսված չեն որպես հեջավորման գործիքներ, ինչպես սահմանված է ՖՀՄՍ 9-ում: Առանձնացված ներկառուցված ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանք նախատեսված չեն որպես արդյունավետ հեջավորման գործիքներ: Վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորությունների օգուտներն ու կորուստները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Վարկեր և փոխառություններ, թողարկված պարտատոմսեր ու առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Սկզբնական ճանաչումից հետո, տոկոսակիր վարկերն ու փոխառություններն ու առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտներն ու կորուստները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ պարտավորությունները ապաճանաչվում են, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույքի ամորտիզացիայի գործընթացի միջոցով:

Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած գեղջ կամ հավելավճար, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մաս հանդիսացող վճարները կամ ծախսերը: Արդյունավետ տոկոսադրույքի ամորտիզացիան ներառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այս դասը հիմնականում կիրառվում է տոկոսակիր վարկերի և փոխառությունների ու առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի դեպքում:

Ապաճանաչում

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ դրա հետ կապված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցրած է ճանաչվում: Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է միևնույն փոխառուի՝ Էականորեն տարբեր պայմաններով մեկ այլ պարտավորությամբ, կամ գոյություն ունեցող պարտավորության պայմանները Էականորեն ձևափոխվում են, ապա այդպիսի փոխարինումը կամ ձևափոխումը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և Նոր պարտավորության ճանաչում: Համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մեջ:

Ֆինանսական գործիքների հաշվանցումը

Ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են, և զուտ զումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվությունում, եթե առկա է ճանաչված գումարների հաշվանցման ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվներն իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն:

Հասույթ

Ընկերության հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը հիմնականում առաջանում է արտադրված և գնված ապրանքների վաճառքից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5- քայլի գործընթացով.

- Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- Բացահայտել կատարման պարտականությունները
- Որոշել գործարքի գինը
- Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Հասույթ (շարունակություն)

Պաշարների վաճառքից հասույթ

Պաշարների վաճառքից հասույթը ճանաչվում է, երբ վերահսկումը փոխանցվում է գնորդին: Վերահսկումը հիմնականում փոխանցվում է, երբ պաշարները հանձնվում են հաճախորդին: Վերահսկողության փոխանցման պահը որոշելու համար չի պահանջվում բարդ դատողություններ: Երբ պաշարները առաքվում են գնորդի հետ համաձայնեցված վայր, ապա դրանից հետո Ընկերությունը այլևս չունի պաշարների նկատմամբ հսկողության իրավունք, սովորաբար ձեռք է բերում վճարման ստացման իրավունք և չի պահպանում պաշարների հետ կապված նշանակալի ռիսկեր կամ հատույցներ:

Ֆինանսական եկամուտ և ծախս

Ընկերության ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսը ընդգրկում են.

- ▶ Տոկոսային եկամուտ;
- ▶ Տոկոսային ծախս;

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման/ (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում է տվյալ ժամանակաշրջանի գույք շահույթի կամ վնասի մեջ:

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային կորուստի հետագա տարիներ փոխանցմամբ:

Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվեկշռային մեթոդով, հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար օգտագործված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակներով օգտագործված գումարների (հարկային բազայի) միջև ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարելու որպես աշխատողի կողմից մատուցված անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Արտարժույթային գործառնություններ

Արտարժույթով գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով, փոխարկվում են կիրառելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը իրենից ներկայացնում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի, և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Պատմական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի կազմում:

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր 393.57 ՀՀ դրամ (2021թ.՝ 480.14 ՀՀ դրամ), 1 եվրոյի համար՝ 420.06 ՀՀ դրամ (2021թ.՝ 542.61 ՀՀ դրամ), 1 Ռուսաստանյան ռուբլու համար՝ 5.59 ՀՀ դրամ (2021թ.՝ 6.42 ՀՀ դրամ):

4. Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընկերությունը առաջին անգամ կիրառել է որոշակի ստանդարտներ և ստանդարտների փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը հրապարակվել է, բայց դեռևս ուժի մեջ չի մտել:

Անբարենպաստ պայմանագրեր - Պայմանագրի կատարման ծախսեր ՎՆ ՀՀՄՍ 37 փոփոխություններ

Պայմանագիրը համարվում է անբարենպաստ, եթե այդ պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսերը (այսինքն, այն ծախսերը, որոնց մասով Ընկերությունը չի կարող խուսափել պայմանագրի առկայության դեպքում) գերազանցում են դրա շրջանակներում ակնկալվող տնտեսական օգուտները: Փոփոխությունները հստակեցնում են, որ պայմանագրի անբարենպաստ կամ վնասաբեր լինելը գնահատելիս, կազմակերպությունը պետք է ներառի այն ծախսումները, որոնք ուղղակիորեն առնչվում են ապրանքների կամ ծառայությունների մատուցման պայմանագրին, ներառյալ ինչպես լրացուցիչ ծախսերը (օրինակ՝ ուղղակի աշխատանքի և կյուլթերի ծախսերը), այնպես էլ պայմանագրային գործունեության հետ անմիջականորեն կապված ծախսերի բաշխումը (օրինակ՝ պայմանագրի կատարման համար օգտագործվող սարքավորումների մաշվածությունը և պայմանագրի կառավարման և վերահսկողության ծախսերը): Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն չեն առնչվում պայմանագրին և չեն ներառվում այդ ծախսերում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծախսերը հստակորեն գանձվում են պայմանագրի մյուս կողմից:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

(հազար ՀՀ դրամ)

4.Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Հիմնական միջոցներ – մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործելը – ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ

Այս փոփոխությունը չի թույլատրում կազմակերպություններին հիմնական միջոցների արժեքից նվազեցնել ակտիվը դեկավարության կողմից նախանշված նպատակով գործարկելու համար համապատասխան վայր և վիճակի բերելու ընթացքում արտադրված միավորների վաճառքից ստացված մուտքերը: Փոխարենը, կազմակերպությունը ճանաչում է տվյալ միավորների վաճառքից մուտքերը և տվյալ միավորների արտադրման նպատակով ծախսումները շահույթում կամ վնասում: Անցումային դրույթների համաձայն՝ Ընկերությունը կիրառում է այս փոփոխությունները հետընթաց միայն հիմնական միջոցների այն միավորների նկատմամբ, որոնք մատչելի են օգտագործման համար ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո, երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է փոփոխությունը (սկզբնական կիրառման ամսաթիվ):

Այս փոփոխությունները Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ չի իրականացվել հիմնական միջոցներով արտադրված այդպիսի միավորների վաճառք, որոնք մատչելի են եղել ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո:

ՀՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ - Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար, «10 տոկոս» թեստում ներառվող վճարներ

Փոփոխությունը պարզաբանում է այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ Եուրոյան տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն փոխառուի և փոխատուի միջև վճարված կամ ստացված վճարները, այդ թվում՝ կամ փոխառուի կամ փոխատուի կողմից մյուսի անունից վճարված կամ ստացված վճարները: Համանման փոփոխություն չի առաջարկվում ՀՀՄՍ 39 Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում ստանդարտի համար:

Անցումային դրույթների համաձայն՝ Ընկերությունը փոփոխությունը կիրառում է այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար (նախնական կիրառման ամսաթիվը): Այս փոփոխությունները Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ տվյալ ժամանակաշրջանում Ընկերության ֆինանսական գործիքներում փոփոխություններ չեն կատարվել:

5.Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Ստորև նկարագրված են հրապարակված նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել: Ընկերությունը պատրաստվում է կիրառելիության դեպքում ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, երբ դրանք ուժի մեջ մտնեն:

ՀՀՄՍ 1 փոփոխություն. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ և ոչ ընթացիկ

2020 թվականի հունվարին ՀՀՄՍ Խորհուրդը փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 1-ի 69-ից 76-րդ պարագրաֆներում՝ հստակեցնելու պարտավորությունները որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները: Փոփոխությունները պարզաբանում են.

- ▶ Ինչ է նշանակում մարումը հետաձգելու իրավունք,
- ▶ Որ հետաձգելու իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջում,
- ▶ Որ դասակարգման վրա չի ազդում կազմակերպության՝ հետաձգելու իրավունքը օգտագործելու հավանականությունը,
- ▶ Որ միայն այն դեպքում, երբ փոխարկելի պարտավորության մեջ ներդրված ածանցյալ գործիքն ինքնին հանդիսանում է բաժնային գործիք, ապա պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետընթաց: Ընկերությունը ներկայումս գնահատում է ընթացիկ գործունեության վրա փոփոխությունների հնարավոր ազդեցությունը:

(հազար ՀՀ դրամ)

5. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում - Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 8-ում, որտեղ ներկայացված է «հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումը: Փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման տարբերությունը: Ինչպես նաև, դրանք պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպությունները օգտագործում չափման հիմունքները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, եթե այդ փաստը բացահայտվում է: Ակնկալվում է, որ փոփոխությունները եական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում - Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում

2021թ.-ի փետրվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում («Եականության մասին դատողությունների կիրառում»), որտեղ ներկայացված են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ Եականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «Եական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն Եականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Զանի որ Գործնական Գուցումներ 2-ի փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության Եականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույց, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

Ընկերությունը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունը Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտումների վրա:

6. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարությունից կիրառել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն եկամուտների ու ծախսերի, ակտիվների, պարտավորությունների և կից բացահայտումների վրա, ինչպես նաև պայմանական պարտավորությունների բացահայտումների վրա առանձին ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերլուծվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք կարող են տեղի ունենալ որոշակի հանգամանքների պարագայում: Այս գնահատումների և ենթադրությունների վերաբերյալ անորոշությունը կարող է հանգեցնել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների Եական ճշգրտումներ: Առավել Եական ազդեցություն ունեցող գնահատումները և դատողությունները հետևյալն են.

(հազար ՀՀ դրամ)

6. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ (շարունակություն)

Առևտրային դեբիտորական պարտքերի և այլ ֆինանսական ակտիվների արժեզրկում - ծնթ. 9 և 11

Ղեկավարությունը պարբերաբար վերանայում է իր ֆինանսական ակտիվների արժեզրկման հայտանիշները: Ղեկավարությունը անհրաժեշտության դեպքում կիրառում է իր մասնագիտական դատողությունները՝ գնահատելու համար ցանկացած արժեզրկումից կորուստների գումարը:

Ղեկավարությունը գնահատում է ապագա դրամական հոսքերում փոփոխությունները՝ հիմնվելով այն դիտարկելի տվյալների վրա, որոնք մատնանշում են գործընկերների վճարունակության մակարդակների բացասական փոփոխությունները, կամ ազգային կամ տեղական տնտեսական իրավիճակների փոփոխությունները, որոնք որևէ կերպ առնչվում են ակտիվների արժեզրկման հետ: Սեփական փորձից ելնելով՝ Ընկերությունը կիրառում է իր մասնագիտական դատողությունները ակտիվների վերաբերյալ դիտարկելի տեղեկատվության ճշգրտման համար՝ ընթացիկ իրավիճակը արտացոլելու նպատակով:

Ընկերության առևտրային դեբիտորական պարտքերի ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 4,910 հազար ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ զրո), իսկ Տրամադրված փոխառությունների գծով պահուստը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 17,187 հազար ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ զրո):

Իրական արժեքի գնահատում - ծնթ. 23

Ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար Ղեկավարությունը կիրառում է գնահատման մեթոդ որտեղ ակտիվ շուկայական գնանշումներ չկան: Սա ենթադրում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք կհամապատասխանեն շուկայի մասնակիցների կողմից գործիքի գնահատմանը: Ղեկավարությունն իր ենթադրությունները հիմնավորում է հնարավորինս դիտելի տվյալներով, բայց դրանք միշտ չեն հասանելի: Այդ դեպքում ղեկավարությունն օգտագործում է առկա լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքները կարող են տարբեր լինել փաստացի գներից, որոնք կգործեն հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընկերությունը իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

(հազար ՀՀ դրամ)

7. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ներկայացված են ստորև.

<i>Սկզբնական արժեք</i>	Վարձակալված գույքի բարելավումներ	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրական գույք	Այլ	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Առ 1 հունվարի 2022թ.	-	1,154,126	78,627	20,210	381,369	1,634,332
Ավելացումներ	-	218,069	43,593	59,324	122,403	443,389
Փոխանցումներ	407,747	-	-	-	(407,747)	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	407,747	1,372,195	122,220	79,534	96,025	2,077,721
Կուտակված մաշվածություն						
Առ 1 հունվարի 2022թ.	-	(549,860)	(17,493)	(3,992)	-	(571,345)
Ավելացումներ	(18,688)	(566,642)	(24,206)	(4,034)	-	(613,570)
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	(18,688)	(1,116,502)	(41,699)	(8,026)	-	(1,184,915)
Հաշվեկշռային արժեք առ 1 հունվարի 2022թ.	-	604,266	61,134	16,218	381,369	1,062,987
Հաշվեկշռային արժեք առ 31 դեկտեմբերի 2022թ.	389,059	255,693	80,521	71,508	96,025	892,806
Սկզբնական արժեք						
Առ 1 հունվարի 2021թ.	-	1,094,470	58,696	2,885	341,835	1,497,886
Ավելացումներ	-	59,656	19,931	17,324	39,534	136,445
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	-	1,154,126	78,627	20,209	381,369	1,634,331
Կուտակված մաշվածություն						
Առ 1 հունվարի 2021թ.	-	(837)	-	(78)	-	(915)
Ավելացումներ	-	(549,023)	(17,493)	(3,913)	-	(570,429)
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	-	(549,860)	(17,493)	(3,991)	-	(571,344)
Հաշվեկշռային արժեք առ 1 հունվարի 2021թ.	-	1,093,633	58,696	2,807	341,835	1,496,971
Հաշվեկշռային արժեք առ 31 դեկտեմբերի 2021թ.	-	604,266	61,134	16,218	381,369	1,062,987

(հազար ՀՀ դրամ)

8. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ

	Շենքեր և շինություններ
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2021թ.	92,345
Մաշվածության գծով ծախս	(10,349)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2021թ.	81,996
Մաշվածության գծով ծախս	(10,349)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2022թ.	71,647

	Պարտավորություններ վարձակալության գծով
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	103,478
Տոկոսագումարի աճ	11,412
Վճարված գումար	(17,887)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	97,003
Տոկոսագումարի աճ	10,457
Վճարված գումար	(18,987)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	88,473
Կարճաժամկետ վարձակալության գծով պարտավորություններ	18,063
Երկարաժամկետ վարձակալության գծով պարտավորություններ	70,410

9. Տրամադրված փոխառություններ

	2022		2021	
	Ընթացիկ	Ոչ ընթացիկ	Ընթացիկ	Ոչ ընթացիկ
Տրամադրված փոխառություններ	450,875	879,645	-	95,613
Նվազեցված ակնկալվող պարտքային կորուստի պահուստի չափով	(3,755)	(13,432)	-	-
Ընդամենը	447,120	866,213	-	95,613

Վարկի դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ կատարվում է պայմանագրերի մարման ժամկետների հիման վրա:

Ընկերության Տրամադրված փոխառությունների ակնկալվող պարտքային կորուստները հիմնված են 12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստների վրա և դասակարգված են Փուլ 1 Ակնկալվող վարկային կորուստների հաշվարկման նպատակով: Ընկերության փոխառությունները տրամադրված են ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով և ունեն մինչև 5 տարի ժամկետայնություն: Տրամադրված փոխառությունների ենթարկվածությունը արժույթային ռիսկին ներկայացված է Ծան. 23-ում:

10. Պաշարներ

	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Հումք և նյութեր	520,339	238,395
Գնված ապրանքներ	188,399	-
Արտադրված ապրանքներ	55,827	168,646
Արագամաշ առարկաներ	3,704	3,097
Այլ ծախսվող նյութեր	1,948	3,597
Ընդամենը	770,217	413,735

(հազար ՀՀ դրամ)

11. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր Նվազեցված՝ արժեզրկման կորուստի գծով պահուստի չափով	643,490 (4,910)	206,040 -
Ընդամենը ֆինանսական ակտիվներ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում	653,573	212,158
ԱԱՀ-ի գծով դեբիտորական պարտքեր Տրված կանխավճարներ ընթացիկ ակտիվների համար	14,993 118,711	6,118 83,655
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	772,284	295,813

Ամորտիզացված արժեքով դասակարգված առևտրային և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքը Էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից:
Ստորև ներկայացված է Ընկերության վարկային ռիսկին ենթակա դեբիտորական պարտքերի մասին տեղեկատվությունը.

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1 տարուց ավել	Ընդամենը
2022թ. դեկտեմբերի 31-ի դրույթամբ					
Ակնկալվող պարտքային կորուստի դրույքաչափ	0.11%	0.90%	1.15%	45.91%	0.76%
Համախառն հաշվեկշռային արժեք	577,882	30,768	20,685	8,155	643,490
Ակնկալվող պարտքային կորուստ	(620)	(277)	(239)	(3,774)	(4,910)
Չուտ հաշվեկշռային արժեք	577,262	30,491	26,446	4,381	638,580

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս Ընկերության ակնկալվող պարտքային կորուստների պահուստի շարժը.

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Փուլ 1 ՀՀ դրամ'000	Փուլ 2 ՀՀ դրամ'000	Փուլ 3 ՀՀ դրամ'000	Ընդամենը ՀՀ դրամ'000
2021թ. դեկտեմբերի 31-ի դրույթամբ	-	-	-	-
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ծախս	897	239	3,774	4,910
2022թ. դեկտեմբերի 31-ի դրույթամբ	897	239	3,774	4,910

2021թ. դեկտեմբերի 31-ի դրույթամբ Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը կազմել է զրո ՀՀ դրամ:

(հազար ՀՀ դրամ)

12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Ցպահանջ մնացորդներ բանկում	114	10,542
Կանխիկ` դրամարկղում	1,000	230,770
Ընդամենը	1,114	241,312

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության դրամական միջոցները տեղաբաշխված են ՀՀ վստահելի առևտրային բանկերում: Դրամական միջոցների և դրանց համարժեքների բոլոր մնացորդները դասակարգված են Փուլ 1-ում:

13. Վարկեր և փոխառություններ

	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով չապահովված փոխառություններ մայր ընկերությունից	1,374,442	1,359,366
Գրավով չապահովված փոխառություններ այլ կազմակերպություններից	122,276	16,491
	1,496,718	1,375,857
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով չապահովված բանկային վարկեր և փոխառություններ այլ կազմակերպություններից	639,168	867,139
	639,168	867,139
Ընդամենը	2,135,886	2,242,996

Վարկեր և փոխառությունների ենթարկվածությունը շուկայական և իրացվելիության ռիսկերի ներկայացված են Ծան. 23-ում:

14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	548,443	128,962
Ընդամենը ֆինանսական կրեդիտորական պարտքեր առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում	548,443	128,962
Արձակուրդային պահուստ	11,428	-
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	559,871	128,962

Ամորտիզացված արժեքով դասակարգված առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի իրական արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից:

15. Ընթացիկ հարկային պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Շահութահարկի գծով պարտավորություն	109,728	670
ԱԱՀ-ի գծով պարտավորություն	85,594	12,801
Այլ հարկային պարտավորություններ	4,826	3,229
Ընդամենը ընթացիկ հարկային պարտավորություններ	200,148	16,700

(հազար ՀՀ դրամ)

16. Հասույթ

	2022թ.	2021թ.
Արտադրված ապրանքների վաճառք	3,490,239	1,065,175
Գնված ապրանքների վաճառք	1,013,970	-
Այլ	8	-
Ընդամենը	4,504,217	1,065,175

Վաճառքից հասույթը ճանաչվում է ժամանակի այն պահին, երբ ապրանքների նկատմամբ բոլոր ռիսկերը և իրավունքները փոխանցվում են գնորդին:
2022թ. և 2021թ. ընթացքում Ընկերության արտադրանքը ամբողջովին իրացվել է ՀՀ տարածքում:

17. Վաճառքի ինքնարժեք

	2022թ.	2021թ.
Արտադրված ապրանքների ինքնարժեք	2,459,254	1,133,966
Գնված ապրանքների ինքնարժեք	787,602	-
Ընդամենը	3,246,856	1,133,966

Ստորև ներկայացված է ինքնարժեքի բացվածքը ըստ ծախսերի բնույթի.

	2022թ.	2021թ.
Հումք և կյուլթեր	1,626,543	406,733
Գնված ապրանքների վաճառքի արժեքը	886,927	76,244
Հիմնական միջոցների մաշվածություն	601,341	560,836
Աշխատավարձ	100,903	28,255
Կոմունալ ծախսեր	17,040	-
Օգտագործման իրավունքով ակտիվի մաշվածություն	10,349	10,349
Վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծախսեր	2,953	24,904
Այլ	800	26,645
Ընդամենը վաճառքի ինքնարժեք	3,246,856	1,133,966

18. Վարչական ծախսեր

	2022թ.	2021թ.
Փաթեթավորման և տեսակավորման ծախսեր	88,784	37,585
Աշխատավարձ	57,844	22,583
Հիմնական միջոցների մաշվածություն	12,229	9,593
Բանկային ծախսեր	6,068	2,180
Մասնագիտական ծառայությունների ծախսեր	5,527	120
Իրացման և ապահովագրության ծախսեր	3,422	5,547
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	2,787	6,998
Փոստի և հեռահաղորդակցման ծախսեր	423	642
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	23	-
Այլ ծախսեր	9,772	3,126
Ընդամենը վարչական ծախսեր	186,879	88,374

(հազար ՀՀ դրամ)

19. Ֆինանսական ծախսեր

	2022թ.	2021թ.
Վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	285,760	114,841
Վարձակալության պարտավորությունների գծով տոկոսային ծախսեր	10,457	11,412
Ընդամենը	296,217	126,253

20. Շահութահարկ

Հաշվետու տարվա համար ՀՀ Հարկային օրենսգրքով շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2021թ.-18%):

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

	2022թ.	2021թ.
Շահութահարկի գծով ծախս	109,649	-
Հետաձգված հարկերի գծով ժամանակավոր տարբերությունների առաջացում և վերականգնում	(21,681)	-
Շահութահարկի գծով ծախս	87,968	-

Շահութահարկի արդյունավետ տոկոսադրույքի համադրում

	2022թ.		2021թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	1,240,877		(161,249)	
Շահութահարկ սահմանված դրույքաչափով	223,358	18	(29,025)	18
Այլ չվազեցվող ծախսերի/(չհարկվող եկամուտների) հարկային հետևանքը, զուտ	(106,365)	(9)	-	-
Չճանաչված հետաձգված հարկային ակտիվների փոփոխություն	(29,025)	(2)	29,025	(18)
Շահութահարկի գծով ծախսը և արդյունավետ տոկոսադրույքը	87,968	7	-	-

Հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում որպես ակտիվ/(պարտավորություն) ներկայացված է ստորև.

(հազար ՀՀ դրամ)

20. Շահութահարկ (շարունակություն)

	2022թ. հունվարի 1-ի դրությամբ	(Բաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական միջոցներ	-	(17,285)	(17,285)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	(12,896)	(12,896)
Տրամադրված փոխառություններ	-	1,742	1,742
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	(884)	(884)
Վարկեր և փոխառություններ	-	(11,541)	(11,541)
Վարձակալության գծով պարտավորություններ	-	15,925	15,925
Կրեդիտորական պարտքեր	-	-	-
աշխատակիցներին	-	2,057	2,057
Տեղափոխվող հարկային վնաս	-	44,563	44,563
2022 թ. արդյունք-հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)	-	21,681	21,681

21. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ

Ընկերության գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան:

Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ներկայումս Ղեկավարությունը հետևում է միկրո և մակրոտնտեսական պայմանների փոփոխության հնարավոր ազդեցությանը Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

22. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերության բաժնետերերի մասին տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 1-ում: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը տիրապետում է կապակցված կողմերի հետ գործարքների որոշման և պատշաճ կերպով բացահայտման համապատասխան գործընթացների:

Ընկերությունը կապակցված կողմերի հետ կատարում է այնպիսի գործարքներ, որոնք համարժեք են անկախ կողմերի հետ գործարքներին:

Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Ստորև ներկայացված են առանցքային ղեկավար անձնակազմի հետ գործարքների ընդհանուր գումարները և մնացորդները:

(հազար ՀՀ դրամ)

22. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

	Գործարքի գումարը դեկտեմբեր 31-ի ավատված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	10,104	5,093	-	-
	10,104	5,093	-	-

Գործարքներ մայր կազմակերպության հետ

Ստորև ներկայացված են բաժնետիրոջ հետ գործարքների ընդհանուր գումարները և մնացորդները.

	Գործարքի գումարը դեկտեմբեր 31-ի ավատված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
Ստացված փոխառություններ	-	-	1,374,442	1,359,366
Ստացված փոխառության մարում	(206,911)	(34,561)	-	-
	(206,911)	(34,561)	1,374,442	1,359,366

23. Իրական արժեք և Ռիսկերի կառավարում**Իրական արժեքի չափման գործընթացներ**

Հաշվեկշռային և իրական արժեքի համադրություն

Իրական արժեքի չափման գործընթացներ

Իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման նպատակով Ընկերությունն առանձնացրել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների բնույթի, առանձնահատկությունների և ռիսկերի, ինչպես նաև իրական արժեքի հիերարխիայի վրա:

Իրական արժեքների գնահատման համար օգտագործվել են հետևյալ մեթոդներն ու ենթադրությունները.

- Ընկերությունը գնահատել է, որ դրամական միջոցների և դրանց համարժեքների, ցպահանջ տրամադրված և ստացված փոխառությունների, առևտրային դեբիտորական պարտքերի, կարճաժամկետ վարկերի և առևտրային կրեդիտորական պարտքերի, իրական արժեքները հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին այդ գործիքների կարճաժամկետ մարման ժամկետ ունենալու պատճառով: Այդ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:
- Ընկերության փոխառությունների և վարկերի իրական արժեքները որոշվում են՝ զեղչելով համապատասխան դրամական միջոցների հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ գործիքների համար շուկայական տոկոսադրույքը: Այս դեպքում ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է: Այդ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Այս ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները գրեթե հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին:

(հազար ՀՀ դրամ)

23. Իրական արժեք և Ռիսկերի կառավարում (շարունակություն)**Ռիսկերի կառավարում**

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ,
- Շուկայական ռիսկ,

Ընկերության ղեկավարությունը իրականացնում է վերահսկողություն այդ ռիսկերից յուրաքանչյուրի գծով, որն ամփոփված է ստորև:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտավորությունները Ընկերության նկատմամբ, և այն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերից: Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող պայմանագրային կողմերի համար, բացառությամբ կապակցված կողմերի:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը.

	<u>2022թ.</u>	<u>2021թ.</u>
Տրամադրված վարկեր և փոխառություններ (Ճան. 9)		
Տրամադրված վարկեր և փոխառություններ	1,313,333	95,613
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ճան. 11)		
Դեբիտորական պարտքեր, զուտ	653,573	212,158
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ճան. 12)		
Ցպահանջ մնացորդներ բանկում	114	10,542
Կանխիկ՝ դրամարկղում	1,000	230,770
Պարտքային ռիսկի ընդհանուր առավելագույն ազդեցությունը	<u>1,968,020</u>	<u>549,083</u>

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև պատվիրատուների բազայի կառուցվածքը, ներառյալ այդ պատվիրատուների արդյունաբերության ճյուղերի ու երկրների դեֆոլտի ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ պարտքային ռիսկի վրա, հատկապես ներկայիս տնտեսական պայմաններում:

Ընկերությունը չի ենթարկվում վարկային ռիսկի կոնցենտրացիաների: 2022թ. դեկտեմբերի 31-ին ընկերությունն ուներ 3 գործընկեր (2021թ. դեկտեմբերի 31-ին՝ 2 գործընկեր)՝ 20,000 հազ. ՀՀ դրամից բարձր դեբիտորական պարտքերի համախմբված մնացորդներով: Այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում էր 588,447 հազ. ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ին՝ 191,890 հազ. ՀՀ դրամ) կամ առևտրի և այլ ֆինանսական դեբիտորական պարտքերի 91%-ը (2021թ. դեկտեմբերի 31-ին՝ 93%):

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը՝ ըստ աշխարհագրական տարածաշրջանների.

(հազար ՀՀ դրամ)

23. Իրական արժեք և Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի կառավարում (շարունակություն)

<i>հազ. դրամ</i>	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Տեղական	643,490	205,944
Արտերկիր	-	95
	643,490	206,009

Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են 4 բանկերում (2021թ. դեկտեմբերի 31-ին՝ 3 բանկերում), այդպիսով Ընկերությանը վարկային ռիսկի համակենտրոնացման ենթարկելով:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ կազմակերպությունը կարող է ունենալ դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակ: Իրացվելիության ռիսկը կառավարվում է ղեկավարության կողմից ամենօրյա հիմունքով:

Որպես կանոն, Ընկերությունը ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը 60 օրվա ընթացքում ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ներկայացված են համախառն և չզտչված գումարները, որոնք ներառում են հաշվարկված տոկոսների վճարումները:

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-6 ամիս	6-12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Ֆինանսական պարտավորությունն եր					
Առևտրային և կրեդիտորական պարտքեր (Ծան.14)	-	548,443	-	-	548,443
Վարձակալության գծով պարտավորությունն եր (Ծան.8)	1,491	7,453	8,943	104,339	122,226
Ստացված վարկեր և փոխառություններ (Ծան,13)	611,085	28,083	-	1,490,933	2,130,101
Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարներ ի վճարներ	612,576	583,979	8,943	1,595,272	2,800,770

(հազար ՀՀ դրամ)

23. Իրական արժեք և Ռիսկերի կառավարում (շարունակություն)**Ռիսկերի կառավարում (շարունակություն)**

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-6 ամիս	6-12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆինանսական պարտավորությունն եր					
Առևտրային և կրեդիտորական պարտքեր (Ծան. 14)	-	128,962	-	-	128,962
Վարձակալության գծով պարտավորություններ (Ծան. 8)	1,591	7,953	9,443	122,226	141,213
Ստացված վարկեր և փոխառություններ (Ծան.13)	867,139	-	-	1,375,857	2,242,996
Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարների վճարներ	868,730	136,915	9,443	1,498,083	2,513,171

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը բաղկացած է երկու տեսակի ռիսկերից՝ ա) տոկոսադրույքի և բ) արտարժույթի փոխարժեքի ռիսկերից: Շուկայական ռիսկի ներգործությանը ենթարկված ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառությունները, առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը:

ա) տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է շուկայական տոկոսադրույքի փոփոխության հետևանքով:

Ընկերությունը չունի պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգեր տոկոսադրույքների ռիսկերի կառավարման համար, քանի որ ընկերությունը չունի լողացող տոկոսադրույքներով փոխառու միջոցներ ղեկավարությունը այդ ռիսկը համարում է աննշան Ընկերության բիզնեսի համար:

բ) արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է արտարժույթների փոխարժեքի փոփոխության հետևանքով:

Ընկերությունը ենթակա է արտարժույթային ռիսկի՝ ֆունկցիոնալ արժույթի և վաճառքների, գնումների և փոխառությունների արժույթների անհամապատասխանության հետևանքով: Վերոհիշյալ գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

(հազար ՀՀ դրամ)

23. Իրական արժեք և Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժույթային ռիսկի գծով ղեկավարությունը սահմանում է սահմանաչափեր ռիսկերի նկատմամբ խոցելիության մակարդակի համար՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ: Դիրքերը վերահսկվում են ամսական հիմունքով: Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված է արտարժույթի փոխարժեքի ռիսկի ազդեցությունը Ընկերության վրա հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

<i>հազ. դրամ</i>	<i>առ 31 դեկտեմբերի 2022թ.</i>		
	<i>Դրամական ֆինանսական ակտիվներ</i>	<i>Դրամական ֆինանսական պարտավորություններ</i>	<i>Չուտ հաշվեկշռային դիրք</i>
ԱՄՆ դոլար	56,270	(629,459)	(573,189)
Եվրո	12,382	-	12,382
ՌԴ ռուբլի	8,528	(1,374,602)	(1,366,074)
<i>հազ. դրամ</i>	<i>առ 31 դեկտեմբերի 2021թ.</i>		
	<i>Դրամական ֆինանսական ակտիվներ</i>	<i>Դրամական ֆինանսական պարտավորություններ</i>	<i>Չուտ հաշվեկշռային դիրք</i>
ԱՄՆ դոլար	69,518	(782,442)	(712,924)
Եվրո	-	(191)	(191)
ՌԴ ռուբլի	3,245	(1,359,392)	(1,356,147)

Վերը ներկայացված վերլուծությունը ներառում է միայն դրամական ակտիվները և պարտավորությունները: Ոչ դրամական ակտիվները չեն դիտարկվում որպես որևէ նյութական արժույթային ռիսկ առաջացնող:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է շահույթի և վնասի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

<i>Արտարժույթի փոխարժեքի աճ/ (նվազում)</i>	<i>2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն աճ/(նվազում) հազ. դրամ</i>	<i>2021թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն աճ/(նվազում) հազ. դրամ</i>
	ԱՄՆ դոլարի արժևորում 5%-ով (2021թ. արժևորում 5%-ով)	(28,659)
ԱՄՆ դոլարի անկում 5%-ով (2021թ. անկում 5%-ով)	28,659	35,646
Եվրոյի արժևորում 5%-ով (2021թ. արժևորում 5%-ով)	619	(10)
Եվրոյի անկում 5%-ով (2021թ. անկում 5%-ով)	(619)	10
ՌԴ ռուբլու արժևորում 5%-ով (2021թ. արժևորում 5%-ով)	(68,304)	(67,807)
ՌԴ ռուբլու անկում 5%-ով (2021թ. անկում 5%-ով)	68,304	67,807

(հազար ՀՀ դրամ)

24. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո 2022թ. արդյունքների հիման վրա Ընկերությունը հայտարարագրել է շահաբաժիններ՝ Ընկերության միակ բաժնետիրոջը 800,000 հազ. ՀՀ դրամի չափով, որոնք ամբողջովին վճարվել են 2023թ. մայիսի 22-ի դրությամբ: 2023թ. մայիսի 19-ին՝ հիմնվելով 2023թ. միջանկյալ արդյունքների վրա, Ընկերությունը հայտարարագրել է շահաբաժիններ միակ բաժնետիրոջը 400,000 հազ. ՀՀ դրամի չափով, որոնք ամբողջովին վճարվել են 2023թ. մայիսի 26-ի դրությամբ: